

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՅՄ ՌԱԶՄԱՎՐԴՅՈՒՄԻՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1922-1991 ԹԹ.), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱՎ ՊԱՏՄ. ԻՆՍՏ., 2015, 345 ԷԶ:

Ամբողջատիրական համակարգի վերացումը պատմագիտությանը ազատեց գաղափարական կապանքներից և հնարավորություն տվեց պատմության լուսաբանումը քաղաքական ոլորտից տեղափոխել գիտական հարթություն, հայ ժողովրդի պատմական ուղին ԽՍՀՄ գոյության պայմաններում ներկայացնել անաչառ ու ճշմարիտ, ինչպես որ եղել է: Դա նշանակում է՝ խորհրդային 70 տարիների պատմության նորովի հետազոտություն, որը բացառում է իրականության գունազարդման և խորհրդային տարիների նվաճումների միակողմանի գովերգման մոտեցումները: ԽՍՀՄ կազմում հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանվեց արտաքին սպառնալիքներից, այլև ունեցավ ստեղծագործելու և զարգանալու ապահով պայմաններ: Սակայն կոմունիստական կուսակցության մենատիրությունը, բացարձակ միահեծան իշխանությունը բազմաթիվ չարիքներ պատճառեց խորհրդային բոլոր ժողովուրդներին, այդ թվում՝ հայությանը: Չնայած դրան ՀԽՍՀ-ն դարձավ տարածաշրջանի ամենազարգացած արդյունաբերական երկրներից մեկը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի երրորդ Հանրապետության պայմաններում հնարավորություններ են ստեղծվել կատարելու անկողմնակալ ու անաչառ ուսումնասիրություններ նախկինում չթույլատրվող թեմաներով, տնտեսական նոր համակարգի ստեղծման գործում նախորդ հասարակարգի ռազմատնտեսական պատմության փորձի օգտագործմամբ Դրանով էլ պայմանավորած է գրքում շոշափվող թեմայի արդիակախությունը: Առաջին անգամ հայ պատմագիտության մեջ ամբողջական ու համակողմանի ուսումնասիրվում է խորհրդային Հայաստանի տեղն ու դերը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումներում և ռազմական արդյունաբերական համալիրի (ՌԱՀ) համակարգում: Հետազոտվող թեման ունի գիտագործնական կարևոր նշանակություն՝ վերախմաստավորելու 70 տարվա ընթացքում ռազմապաշտպանական ոլորտում տեղի ունեցածը, բացահայտելու հաջողություններն ու թերությունները, օրինաչափություններն ու զարգացման միտումները, ճշգրտելու հետագա ընթացքն ու խնդիրները. առաջարկելու գիտական հիմնավորմամբ լուծումներ՝ ապահովելով գործընթացի հաջորդ փուլի արդյունավետությունը, մշակելու նոր ռազմավարություն ու մարտավարություն: Հենց սկզբից պետք է ընդգծել, որ Կարեն Խաչատրյանի աշխատությունը վկայում է, որ ուսումնասիրությունը տարիների տևական աշխատանքի, ծավալուն նյութերի իմացության, գիտական բարեխղճության և ընդհանրացման արգասիք է, դրվատելի գործ: Աշխատության պատմագիտական նշանակության հիմնական բաղադրիչը համապարփակ լինելն է, որին նա հասել է վերլուծելով, գնահատելով ու հավուր պատշաճի ամփոփելով թեմային վերաբերող նորահայտ նյութերը:

Ներածությունում հիմնավորված են ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, գիտական նորություն ու գործնական նշանակությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ցույց է տրված թեմայի աղբյուրագիտական հենքն ու ուսումնասիրվածության աստիճանը, բացահայտվում է «ՌԱՅ» հասկացությունը:

Աշխատության առաջին գլուխը՝ «Խորհրդային ռազմաարդյունաբերության ստեղծումը և զարգացումը: Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման նախադրյալները Խորհրդային Չայաստանում (1920-1930-ական թթ.)», բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում քննարկվում են ԽՍՀՄ-ում ռազմապաշտպանական արդյունաբերության և դրա կառավարման համակարգի ձևավորման ու զարգացման հիմնավուրերը:

Դեղինակը փաստում է, որ «Չայրենական պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ-ը հիմնականում լուծել էր երկրի ռազմապաշտպանական մասնագիտացված արդյունաբերության ստեղծման կարևոր հիմնախնդիրը»:

Երկրորդ ենթագլխում համոզիչ փաստերով ցույց է տրվում, թե ինչպես Խորհրդային Չայաստանի տնտեսության վերականգնման, արդյունաբերության տեխնիկական վերազինման գործում վճռական նշանակություն ունեցավ Խորհրդային Ռուսաստանի օգնությունը, որի շնորհիվ զարգացավ հանրապետության Էներգետիկան, մասնավորապես պղնձարդյունաբերությունն ու քիմիական արդյունաբերությունը: Բազմաթիվ փաստերով Կ. Խաչատրյանը հիմնավորում է 1930-ական թթ. վերջին հանրապետությունում զարգացած բազմաճյուղ արդյունաբերության առկայությունը, ինչը կենտրոնական իշխանություններին հնարավորություն տվեց Չայրենական պատերազմի սկզբին ՉԽՍՀ-ն աստիճանաբար ընդգրկել ինչպես Անդրկովկասյան ռազմական օկրուգի ռազմապաշտպանական միջոցառումներում, այնպես էլ ԽՍՀՄ-ում ձևավորվող ռազմաարդյունաբերական համալիրում:

Աշխատության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Խորհրդային Չայաստանը Երկրորդ աշխարհամարտի ու Չայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումներում և ռազմաարդյունաբերության համակարգում (1939-1945թթ.)», բաղկացած է 2 ենթագլուխներից (4 ենթահարցերով): Առաջին ենթագլխում Խաչատրյանը լուսաբանում է Խորհրդային Չայաստանի տեղն ու դերը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումների և Խորհրդաթուրքական դիմակայության ոլորտում: Անդրադառնալով պատերազմի ավարտական փուլում Խորհրդային Միության կողմից Թուրքիային ներկայացված տարածքային պահանջներին՝ հեղինակը ընդգծում է խնդրի ձախողման մեջ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի խաղացած դերը, որոնք ելևելով «կոմունիզմի ծավալումը զսպելու» դիրքերից՝ հանդես եկան Թուրքիայի պաշտպանությամբ:

Երկրորդ ենթագլխում առանձին ենթահարցերով հեղինակը ներկայացնում է Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի հիմնումն ու շահագործումը, որն իրականացվում էր ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության Ժողովմատի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ: Նորահայտ արխիվային նյութերի վերլուծությամբ հեղինակը նշում է զենքի ու ռազմամթերքի այն տեսակները, որոնց արտադրությանը լծվեցին հանրապետության ծանր արդյունաբերության մեխանիկական, մետաղամշակման, գունավոր մետաղագործության ու քիմիական մի շարք ձեռնարկություններ: Լուսաբանում է ռազմական արտադրության կազմակերպման խնդիրները պատերազմի բոլոր

տարիներին՝ հանրագումարի բերելով պատերազմի տարիներին խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման արդյունքները:

Հեղինակը ցույց է տալիս, թե հայ գիտնականներն իրենց ուսումնասիրություններով ու գյուտերով ինչպիսի ավանդ ունեցան հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման ու զարգացման գործում:

Աշխատության երրորդ գլխում առաջին անգամ հայ պատմագիտության մեջ բացահայտվում է գերմանական ռազմավարի դերը խորհրդային Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման գործում: Ցույց է տրվում, թե ինչպես ի թիվս խորհրդային մյուս հանրապետությունների «գերմանական ռազմավարի» իր չափաբաժինը ստացավ խորհրդային Հայաստանը՝ տեղական արդյունաբերությունը վերագինելու, նոր գործարաններ և արտադրամասեր հիմնելու համար: Ընդգծվում է այդ գործում ՀԽՍՀ պատվիրակության և նրա ղեկավար ՀԽՍՀ Ժողովմխորիի Նախագահի տեղակալ Գ. Չոլախյանի կազմակերպչական մեծ ընդունակությունն ու հաստատակամությունը:

Այս գլխում քննարկվում է նաև հետպատերազմյան տարիների խորհրդային տնտեսությունը վերականգնելու, արդյունաբերության վերակառուցման միջոցառումների հիմնախնդիրը: Վեր են հանվում ռազմաբաղաքական հզոր դաշինքների՝ ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի կազմակերպությունն ներկայացնող ԱՄՆ-ում և ԽՍՀՄ-ում վերջնականապես ձևավորված ռազմաարդյունաբերական համալիրի 1950-60-ական թթ. բնորոշ գծերը, որոնցից գլխավորը, ըստ հեղինակի, այն ոլորտներն են, որ ներգրավված էին միջուկային զենքի, զենիթահրթիռային սպառազինության և ռադիոտեղորոշումային նորագույն տեխնիկայի ստեղծման աշխատանքներում:

Արխիվային Նորահայտ փաստաթղթերի վերլուծությամբ հեղինակը մանրամասն ուսումնասիրում է ՀԽՍՀ արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղի ձեռնարկությունների ներգրավվածությունը խորհրդային ՌԱՀ-ում և նրանց արտադրանքը: Որպես կարևոր հանգամանք, նա ընդգծում է, որ «խորհրդային Հայաստանի տարածքում գտնվող և ոչ մի արտադրական ձեռնարկություն չէր թողարկում զենքի և զինամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության վերջնական արտադրանք»: Դա կենտրոնից կախվածության յուրահատուկ ձև էր:

Ներկայացնելով հանրապետության գիտության ներդրումը ԽՍՀՄ ՌԱՀ-ում՝ խաչատրյանը առանձնացնում է Երևանում բացված Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵԻՄՄԳՀԻ), Էլեկտրամեխանիկական համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (ԷՄՀԳՀԻ) հայկական մասնաճյուղը և այլն՝ հատուկ ընդգծելով այն կարևոր հանգամանքը, որ 1950-1960-ական թթ. Հայաստանի գիտությունը մասնակից էր դառնում խորհրդային ատոմային և տիեզերական ծրագրերին, որտեղ գերակշիռը ռազմական բաղադրիչն էր:

Մենագրության չորրորդ գլխում Կ. Խաչատրյանը առանձնացնում է ԽՍՀՄ Պաշտպանության Նախարարության պատվերով ՀԽՍՀ ԳԱ ինստիտուտներում, Երևանի պետհամալսարանի և Պոլիտեխնիկ ինստիտուտի լաբորատորիաներում ու ամբիոններում իրականացվող շարժվող օբյեկտներ հայտնաբերելու համար ռադիոսարքեր մշակելու, ԷՀՄ-ների և ԿԱՀ-երի կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքները: Կարևորում է 1970-80-ական թթ. խորհրդային ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերության ոլորտում հայ նշանավոր գիտնականներից ակա-

դեմիկոսներ Ռ. Աթոյանի, Ֆ. Սարգսյանի, Պ. Յերուևու, Ա. Իոսիֆյանի և այլոց գիտական ներդրումները: Բերված փաստերը վկայում են, որ ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը՝ 1991թ. վերջին, ԵրՄՍԳՅԻ-ում, Հայաստանի Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական ինստիտուտում (ՌԶՐԳՅԻ), «Աստրո» ԳԱՄ-ում, ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում և այլ գիտահետազոտական հաստատություններում մեծ ծավալի ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կարևոր աշխատանքներ կատարվեցին և բազմաթիվ նոր հայտնագործություններ ներդրվեցին ռազմական արտադրության մեջ:

Ամփոփելով՝ նա ընդգծում է, որ ռազմապաշտպանական նպատակներով ԷՅՄ-ների, ՄԷՅՄ-ների, ԿԱՅ-երի, ռադիոէլեկտրոնային և էլեկտրական հատուկ սարքերի մասերի, հանգույցների, քիմիական, դեղագործական, կենսաբանական միջոցների մշակման և արտադրման ոլորտում Խորհրդային Հայաստանի, հայ գիտնականների նվաճումները բացառիկ են ու տպավորիչ: Չուր չէ, որ մեր հանրապետությունը ԽՍՀՄ-ում վաստակել էր Խորհրդային «Սիլիկոնային հովտի» համբավ:

Ներկայացնելով հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերությունը Խորհրդային վերջին տասնամյակներին, հեղինակը նշում է, որ 1970-ական թվականներից ՀԽՍՀ-ում հիմնվեցին Խորհրդային ՌԱՅ-ը սպասարկող ԽՍՀՄ պաշտպանական, ավիացիոն, նավաշինության, միջին մեքենաշինության, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական արդյունաբերության տասնյակ ձեռնարկություններ ու կազմակերպություններ, մասնագիտացված և հատուկ կոնստրուկտորական բյուրոներ և այլն, որոնց արտադրանքը առաքվել է ոչ միայն միութենական հանրապետություններ, այլ սոցիալիստական համակարգի մի շարք երկրներ՝ Բուլղարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Յուգոսլավիա և այլն:

Արխիվային փաստերով մատնանշում է 1970-80-ական թթ. «Հայէլեկտրագործարանի» «Հրազդան մեքենա» միավորման, Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորման, Դիլիջանի «Իմպուլս» գործարանի և նրա մասնաճյուղերի զարգացման առաջընթացը: Միաժամանակ անդրադառնում է 1980-ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Հայաստանում ստեղծված ծանր դրությանը, ընդգծում, որ ձեռնարկություններում թույլ էր արտադրական կարգապահությունը, նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը, ավելանում էր արտադրանքի խոտանը, ամբողջությամբ չէին կատարվում նախանշված առաջադրանքներն ու մատակարարումները և այլն: Նա միանգամայն ճիշտ է նկատում գրելով, որ ՀԽՍՀ-ի առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական դրությունը վատացավ 1988թ. կեսերից, երբ Խորհրդային իշխանությունների կողմից իրականացված ազգային խտրականության քաղաքականության, Սոււմգայիթում և այլուր կազմակերպված վայրագությունների հետևանքով սկսվեց հայության զանգվածային բռնազաղթը դեպի Խորհրդային Հայաստան: Եթե այս ամենին ավելացնենք Ադրբեջանի կողմից պարբերաբար իրականացվող ՀԽՍՀ տնտեսական շրջափակումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով պայմանավորված գործադուլային շարժումը և դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի հետևանքները, պարզ կդառնա, որ վերջնականապես կաթվածահար էր եղել երկրի տնտեսությունը:

Այս ամենի հետևանքով, ինչպես միանգամայն օբյեկտիվորեն եզրակացնում է հեղինակը, «ԽՍՀՄ-ի փլուզման շրջանում համամիութենական պաշտպանական պատվերների, ֆինանսների փաստացի բացակայության, ռազմական նշանակության բազմաթիվ

ապրանքներ արտադրությունից հանելու և այլ պատճառներով խորհրդային ՌՍՀ-ի հայաստանյան ձեռնարկությունների և կազմակերպությունների գերակշիռ մասը 1991 թ. վերջին կամ պարապուրդի մեջ էր, կամ նրանց ծանրաբեռնվածությունը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա»:

Այսպիսով, գրքի հիմնական արժանիքը կարելի է համարել նպատակադրված ինդիքների նորովի ուսումնասիրման և գնահատման հաջողված փորձ, որն ունի պատմաճանաչողական և քաղաքական կարևոր նշանակություն, հանդիսանում է միանգամայն ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք: Առաջին անգամ հարուստ, նորահայտ արխիվային նյութերի, համապատասխան փաստաթղթերի, հրապարակի վրա եղած հայ և օտարալեզու գրականության օգտագործմամբ Կ. Խաչատրյանը ստեղծել է ուշագրավ գիտական աշխատություն: Այն բարդ և միևնույն ժամ չուսումնասիրված հիմնահարցերին նվիրված առաջին ամբողջական, անկողմնակալ և նորովի, պատմագիտության արդի պահանջներին ու չափանիշներին համահունչ, ըստ ամենայնի հաջողված ուսումնասիրություն է, վկայում է հեղինակի գիտական բարձր մակարդակի և բավականին բարդ հարցերին ինքնուրույն լուծումներ տալու հմտության մասին:

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԷՂ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ